## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2025թ. թիվ 728-Ա

### Ա.ԳԱԼՍՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և 112-րդ հոդվածի 2.1 մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Ա.Գալստյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Արմինե Միխայելի Գալստյանին 2025թ. նոյեմբերի 17-ից ազատել «Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2019 թվականի օգոստոսի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Արմինե Գալստյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր